ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԻՆ ՄԵՋ

ՆՈՒՊԱՐ ՍԵՓՈՅԱՆ ՍԻՓԱՆ
(Հոլանդիա)

Հայ ժողովուրդի ներկա աշխարհագրական վիճակը բացառիկ է իր էությամբ։ Կարգ մը քաղաքական, դիվանագիտական տմարդ դեպքերուն անմիջական հետևանքով հայության մեծամասնությունը այսօր կը գտնվի իր պատմական երկրեն դուրս՝ սփռված աշխարհով մեկ։

Սփյուռք կոչված այս արհեստական կառույցին մեջ, իրենց հայրենի արմատներեն զրկված հայ բեկորները ամենօրյա պայքար կուտան գոյատևելու համար։ Պայքար՝ ոչ միայն մեկ ճակատի վրա, հայտնի թշնամու դեմ, այլ բազմաթիվ ճակատներով և հազարապատիկ մեծ, լափող ու կլանող հակառակորդին դեմ։

Այստեղ մեր ուշադրությունը կը սևեռենք այդ ճակատներեն լոկ մեկուն վրա՝ առանց մնացյալ բազմաթիվ ճակատներու կարևորությանը թերագնահատելու։ Խոսքը հայուն իր ազգային, էթնիկական դիմագիծը պահպանելու համար համառորեն ծավալած պայքարին մասին է։

Մեր խոսքը մատչելի դարձնելու համար պիտի նախ սահմանենք էթնիկա և էթնիկական ինքնություն հասկացությունները, նշենք անոնց որոշիչ գործոնները և ապա մուտք գործելով հայ սփյուռք իրականության մեջ, պիտի ջանանք այնտեղ արծարծել սփյուռքահայության ազգային-էթնիկական ինքնության հարցը։

Սոցիալական անհերքելի իրականություն է, որ մարդիկ «իրենց նմաններուն» հետ առնչվելու և համախմբվելու ինչ-որ պահանջք կզգան։ Մարդկային այս զգացումը միանգամայն պարզ է և հասկանալի, քանի որ մենակությունն ու անհայտությունը մարդուս դաս չի տար։ Առնչվելով ու համախմբվելով «իրենց նմաններուն» հետ, մարդիկ զիրենք ոչ միայն ավելի զորավոր՝ մենակութենե փրկված կզգան բարդ ու փրկված անհայտութենե։ Որոշակի խումբի մը պատկանելութենե մարդիկ կը վաստակեն նաև սոցիալական ինչ-որ ինքնություն։ Իսկ սոցիալական ինքնությունները բազմաբնույթ ու բազմատեսակ են։ Անոնք կրնան հիմնված ըլլալ մարդկային այնպիսի առանձնահատկություններուն վրա, ինչպիսին են սերը, տարիքը, դասակարգը, ասպարեզը, հավատքը (կրոնը) և այլն։ Այս կարգին պետք է գումարել նաև միասնականության ու կապակցության այն հոմազգացումը, որ հասարակ մշակույթին, ծագումին ու պատմության կը հենվի։ Ասիկա արդեն էթնիկան է։ Ազգային կամ էթնիկական ինքնությունը սոցիալական ինքնություններուն այն տարբերակն է, զոր հիմնված է ընդհանուր ծագումին, պատմության և մշակութային, ինչպես օրինակ լեզուն և կրոնը-ժառանգության վրա։

Էթնիկան օբյեկտիվորեն չափելի է մայրենի լեզվի գործածության քանակով, ինչպես նաև ներխմբային հարաբերությանց ինտենսիվության աստիճանով։ Այնպես, որ տվյալ խումբին անդամները որքան շատ իրենց մայրենի լեզուն գործածեն իբրև հաղորդակցության միջոց և որքան հաճախակի շփվեն իրարու հետ, նույնքան զորավոր է էթնիկան այդ խումբին մեջ։

Ուրեմն էթնիկան շարժունակ է, որոշ պայմաններու և գործոններու ազդեցության տակ կարող է զորանալ և կամ տկարանալ։ Էթնիկական ինքնության (կամ ազգային դիմագծի) վրա ազդեցիկ դեր կը խաղա նախ և առաջ դոմինանտ հասարակությունն ինքը, իր կեցվածքով։ Թշնամական վերաբերումը, օտար աչքով նայիլը, խտրականությունն ու անհանդուրժողականու-

թյունը տվյալ էթնիկ փոքրամասնության անդամներու հանդեպ, այս վերջիններուն էթնիկական ինքնությունը վառ կը պահեն և անոր առավել զարգացման կը նպաստեն։

Էթնիկ խումբի անդամներուն իրենց ազգային արժեքը և տիպարները գնահատելու աստիճանը նույնպես որոշիչ դեր մը կը խաղա էթնիկայի մակարդակին վրա։ Բնական է, որ մարդիկ «իրենցը» իրենց պատկանած խումբին հատուկ արժեքները շատ անգամ ավելի բարձր կը գնահատեն, քան օտարինը։ Իրենց երևակայությամբ գերագնահատելի այնպիսի արժեք և տիպարներուն տեր խումբին մը պատկանելե, մարդիկ զիրենք հպարտ կզգան։ Եվ ահա այդ ազգային հպարտության զգացումը կրնա արգելք հանդիսանալ տվյալ էթնիկ-խումբին կազմալուծման և անոր անդամներուն այլասերման։

Էթնիկան ենթակա է նաև բազմաթիվ այլ գործոններու ուղղակի թե անուղղակի ազդեցության։ Նշելու արժանի են՝ գաղթի տևողականությունը (շղթայաձև գաղթը), բնակության վիճակը (կենտրոնացած թե սփռված), աշխարհի մեջ տեղի ունեցող ընկերամշակութային, քաղաքական տարբեր տեղաշարժերը և նման գործոնները։

Որքանո՞վ կը համապատասխանին այս տեսական դրույթները իրականության։ Վերլուծենք սփյուռքահայ իրականությունը՝ գտնելու համար սույն հարցին պատասխանը։

Հայ սփյուռքը ծնունդն է հայոց ցեղասպանության։ Թուրքի յաթաղանի ձեռքեն մազապուրծ ազատված հայոց բեկորները մեծավ մասամբ հաստատվեցան Միջին Արևելքի նորակազմ երկիրներուն մեջ, ուր առկա էր այդ նույն (կրոնական համայնքներու վրա հիմնված) քաղաքա-ընկերային համակարգը (միլլեթ), զոր ուներ Օսմանյան պետությունը։ Ահա այս ծանոթ համակարգի շնորհիվ է, որ Կահիրէի, Հալեպի և Պեյրութի հայկական համայնքները մեծապես զարգացան։ Նորածին այս համայնքները ընդօրինակեցին ժամանակի Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի և Թիֆլիսի հայկական գաղութներուն կառույցը և նույն ձևով ալ զարգացան։ Դարեր շարունակ, ազգային պետականութենեն զրկված հայ ժողովուրդը, հայրենի հողեն և ազգաբնակչութենեն հեռու ազգային (մշակութային) կյանք ստեղծելու սովորությունը արդեն ուներ։ Չէ որ ոչ Պոլիսը, ոչ Զմյուռնիան և ոչ ալ Թիֆլիսը հայկական քաղաքներ էին, բայց և այնպես իբրև կարևոր կենտրոններ, մեծ դեր խաղացած էին հայ մշակույթի զարգացման ու տարածման շնորհալի գործին մեջ։

Միջին Արևելքի նորակազմ երկիրներուն մեջ, իրենց ազգային-էթնիկական դիմագիծը պահպանելը՝ հայապահպանումը, այնքան ալ դժվար չէր հայոց համար։ Ինչպես վերը հիշվեցավ, այս երկրներու կացությունը ոչ միայն չէր խոչընդոտեր հայապահպանումը, այլ և կը պահանջեր, որ հայը հայ մնար։ Այդ համակարգին մեջ իմաստ և արժեք մը ունենալու համար մարդ պարտավոր էր մեկ կամ մյուս համայնքին պատկանիլ։

Քանի որ այդ երկիրներուն մեջ հասարակական կրթական մեխանիզմը տակավին հիմնված չէր, հայ գաղթականները հիմնեցին իրենց ազգային դպրոցը։

Հայ մանուկը հաճախեց իր հայկական վարժարանը, ուր և ստացավ համարյա մի զուտ հայեցի դաստիարակություն։ Եվ, որովհետև ընտանիքը և դպրոցը ամենահիմնական գործոններ են, որոնք մարդու ընկերային զարգացման վրա որոշիչ դեր կը խաղան, Միջին Արևելքի մեջ հասակ առնող հայու համար ապազգայնացման և ձուլման հնարավորությունը պարզապես չնչին էր։ Այս երկու հիմնական գործոններէ զատ պետք է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ հայ պատանին դպրոցային ժամերեն ետքն ալ հայկական հասարակական կյանքին մասնակից էր և հայոց լեզվով կը հաղորդվեր։ Այստեղ հայ երիտասարդը հպարտ էր իր հայությամբ, որովհետև իր ազգային արժեքները ավելի բարձր կը դասեր, քան արաբական, պարսկական և կամ թուրքական ազգային արժեքները։ Սակայն ան միևնույն ատեն

վարակված էր եվրոպական հակումներով այնպես, որ եթե չգերադասհատեր եվրոպական արժեքները, ապա շատ անգամ գոնե հավասար կը համարեր իր հայկական արժեքներուն։ Քիչ չէր և օրըստօրե կավելանար հայ երիտասարդներուն թիվը, որոնք կնախընտրեն եվրոպական կենցաղավարությունը։ Թեև այս երևույթը միայն հայ երիտասարդության հատուկ բան մը չէր (և նույնը կարելի է ըսել շրջանի երիտասարդության մեծամասնության համար), բայց միևնույնն է, հայերը իրենց քրիստոնյա մշակույթով հարաբերաբար ավելի բաց էին եվրոպական նորություններուն առջև։

Ուրեմն եթե հայապահպանումը Միջին Արևելքի մեջ այսպես առանց մեծ խոչընդոտներու կարելի էր իրականացնել, արդյունաբերության բարձրագույն փուլին հասած Արևմտյան երկիրներուն մեջ, ոչ ուշ ներքին Սփյուռքին մեջ կարելի պիտի ըլլար զայն կերտել նույն դյուրությամբ։ Չէ որ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի նման արդյունաբերական (ինդուստրացած) ու բյուրոկրատական հասարակությունները ծանոթ են իրենց գերզարգացած տեխնոլոգիական մշակույթով, որը անհայտ, անծանոթ և ոչ-անձնական հարաբերություններ կառաջացնե և ահա այդպիսի հարաբերություններուն տիրապետած Արևմուտքին մեջ զարգացած հասարակագիտական տեսություններուն ճնշիչ մեծամասնությունը, երկար ունեին այն համոզումը, որ էթնիկ փոքրամասնությունները ժամանակի ընթացքին (վաղ թե ուշ) դոմինանտ հյուրընկալ հասարակության մեջ կաղմալուծվելու, ձուլվելու և անհայտանալու դատապարտված են։ Պետք է խոստովանիլ, որ այս տեսությունները մինչև վերջին տասնամյակները իբրև փաստված իրականություն կը սեպվեին։ Սակայն եթե նրանք նույնիսկ իբրև կանոն ընդունված չէին, բացառություններ միշտ պիտի ըլլան։

Արդ, ակնարկ մը նետենք հայ-սփյուռքի Արևմտյան թևի գոյացման ու զարգացման պատմության վրա՝ տեսնելու համար, թե ինչպես կընթանա հայապահպանումը այնտեղ։

Ահավոր ցեղասպանությունը վերապրող հայերուն փոքր մասը ավելի հեռու գաղթելով, Արևմտյան երկիրներուն մեջ հաստատվելով գաղութներ կազմեցին։ Շատեր որբ էին, մյուսները չքավոր փախստականներ։ Այլ գաղթականներու նման անոնք ալ խտրության ու զրկանքներու ենթարկվեցան։ Ծանր գործերու մեջ չարաչար աշխատեցան ոչ միայն իրենց փորը կշտացնելու և իրենց անտանելի վիշտը մոռանալու համար, այլ նաև զիրենք ընդունել տալու համար։ Նրանք կարելի եղածին չափ իրարու մոտ բնակություն հաստատեցին և այդպիսով հայ գաղթականներու կենտրոններ գոյացան։ Կամաց-կամաց սկսան այդ հայաշատ թաղերուն մեջ սարքել իրենց հիմնական կառույցները՝ եկեղեցին, հայրենակցական ու մշակութային միությունները և այլն։ Ազգային դպրոցը պակաս մնաց։ Քանի որ Արևմտյան երկիրներու կրթական հաստատություններուն մակարդակը բարձր էր, նրանք ինչո՞ւ պիտի անջատ վարժարաններ հիմնեին։

Եվ իրենց զավակները հաճախեցան պատրաստ պետական վարժարաններ, ուր և ստացան զուտ Արևմտյան կրթություն, մինչ տան մեջ դեռ երկար ժամանակ հայկական ազգային ավանդություններ պիտի տիրեին։ Ուրեմն եթե տունն ու դպրոցը Միջին Արևելքին մեջ իրար կլրացնեին ու կը համակերպվեին, մարդու սոցիալացման մեջ որոշիչ դեր խաղացող այս երկու հիմնական կռվանները Արևմուտքի մեջ իրարումերժ էին։

Հայ գաղթականության երկրորդ սերունդը, որ ահա այսպես երկու իրարամերժ ու անհավասար մշակույթներուն տիրապետության տակ հասակ առավ, բնականաբար ավելի շատ ազդվելով հյուրընկալ դոմինանտ հասարակության ամենուր տիրող հսկա մշակույթեն, օտարացավ։ Շատ տեղեր տակավին հայերեն գիտեին։ Հայախոս մնացին միայն այն երիտասարդները, որոնց ծնողքը բացարձակապես մերժած էին տան մեջ օտար լեզու գործածել։

Ըստ կատարված բազմաթիվ գիտական ուսումնասիրությանց, գաղթական երկրորդ սերունդին պատկանող մարդիկ հյուրընկալ հասարակությանց մեջ

ընկերային-տնտեսական բարձր դիրքեր կը հաջողին գրավել (իհարկե, առաջին սերունդին համեմատ)։ Այս դրույթը կը համապատասխանե նաև հայ գաղթականության երկրորդ սերունդին վիճակին։ Շատերը ահա այդ իսկ հաջողության հետևանքով հեռացան էթնիկական կեդրոններեն ու բնակություն հաստատեցին տեղացի ժողովուրդին մեջ, մինչ ֆրանսիական, անգլիական և այլ ոչ հայկական անուններ ընդունող ու նախընտրողներուն թիվը ամենևին նվազ չէր։ Այլ խոսքով, երկրորդ սերունդը երկչալով կը հեռանար իր ազգային կյանքեն, կը կորսներ իր ազգային դիմագիծը և, այսպիսով, հրաժեշտ կուտար՝ իր հայությանը։ Եվ ահա ճերմակ ջարդի պատմությունները ավելի ու ավելի հաճախ լսվել սկսան։

Եթե նույն զարգացումը շարունակվեր, եթե երրորդ սերունդն ալ նույն ճանապարհով երթար, ապա սփյուռքահայության Արևմտյան թևը ավելի երկար չի պիտի գոյատևեր։ Բայց երրորդ սերունդը այդպես չըրավ։

Որեմն ճիշտ այդ ժամանակ, երբ երկրորդ սերունդը հայկական լեզուն և ինքնությունը մեկդի դրած ապագայի նկատմամբ ճանապարհին վրա առաջադեմներով կը թեթևնար ու կը ձուլվեր ընդհանուր հասարակության մեջ, երրորդ սերունդը եկավ, հասավ։

50-ական ու 60-ական տարիներուն հասունացած այս նոր սերունդը, մինչ այս չտեսնված մեծ հետաքրքրություն ցուցաբերեց հայկական-ազգային ինքնության հանդեպ։

Ո՞ր տեսակին կուգար այս յափշտակող հետաքրքրությունը։

Գաղթական խմբակներու երրորդ սերունդներուն հատուկ նման անակընկալ փոփոխությունները կարելի է բացատրել հայտնի այն կանոնով, որու համաձայն երրորդ սերունդին անդամները ինքնության տագնապին մեջ իրենց նախահայրերուն ազգային ինքնության կը կառչին։

Այստեղ հարց մը ինքնաբերաբար կը բարձրանա։ Արդյո՞ք սխալ չի պիտի ըլլա, եթե մենք սփյուռքահայ երրորդ և ապա չորրորդ սերունդներուն առաջ բերած հետաքրքրական ու մեծ տեղաշարժերը ինքնության տագնապի մը վերագրենք։ Կան գիտնականներ, որոնք այդպիսի հետաքրքրական ու մեծ տեղաշարժերը, որ տեղի կունենան որոշ ազգային խմբակներուն մոտ, էթնիկական վերազարթնում կը նկատեն։ Հայ սփյուռքին մեջ 60-ական թթ. սկսած ազգային ինքնաճանաչման պրոցեսը մենք ալ էթնիկական վերազարթնում պիտի նկատենք։ Եվ այդպես նկատելու համար պատճառներ ունինք։

Եթե երկրորդ սերունդը, ընկերային ու տնտեսական բարձր դիրքեր գրավելու գործով զբաղված էր և այդ իսկ պատճառով ժամանակ չուներ իր ազգային մշակույթը, լեզուն և ավանդությունները ապրեցնելու, երրորդ և չորրորդ սերունդները այլևս այդպես չարաչար աշխատելու պետք չունեին ու կրնային ուսանիլ։ Իրր ունևոր ընտանիքի զավակներ՝ անոնք լավագույն համալսարաններու մեջ մասնագիտանալու առիթը ունեցան։

Անոնք սորվելու, մտածելու ու հետազոտելու համար ժամանակ ունեցան։ Շատերը ոչ թե իրենց նախնիներու նման աղստ արհեստներ, բայց ընկերաբանական, պատմական և այլն գիտական մասնագիտություններ նախընտրեցին։

Կա նաև ուրիշ պատճառ մը որ առաջնակարգ դեր մը խաղաց հայ սփյուռքի երրորդ սերունդին մոտ ազգային ինքնագիտակցության վերակենդանացման մեջ։ Այս սերունդը օրորված էր մեծ պապիկներու ու մամիկներու կողմէ։

Եվ բոլորիս հայտնի է, որ մեծ մամիկն ու պապիկը շատ պատմելիք ունին։ Անոնք օրորեցին ու պատմեցին իրենց կրած չարչարանքներուն մասին, իրենց հայրենի երկրի և ընտանիքի տխուր պատմության մասին ու դրկանքների, ջարդի, յաթաղանի, աքսորի մասին... իսկ մանուկը մտիկ ըրավ, դնացավ-արթնացավ ու դարձյալ մտիկ ըրավ, մեծցավ, հարցուց և պապիկը դարձյալ (պատմեց)։ Մանուկը, պատանին իր պապիկին պատմությունները մոռանալ չկրցավ ու թե այդ պատճառով, որ ան այդ ցավալի պատ-

մութիւնները կը սիրեր, բայց հավանաբար որոշ ինքնություն մը յուրացնելու համար։ Այստեղ, թերևս, հիշելի է սիմվոլիկ էթնիկականության խնդիրը։ Ի՞նչ է սիմվոլիկ էթնիկականությունը։ Այդ կարոտի զգացում մըն է առաջին գաղթական սերունդի կամ նախնյաց երկրի մշակութային կացության հանդեպ, սեր և հպարտություն մը ավանդություններուն հանդեպ, որ կարելի է զգալ, առանց այդ ամենօրյա վարմունքին մեջ ներկայացնելու։ Որ երրորդ և չորրորդ սերունդին մոտ վերակենդանացած հետաքրքրությունը հայկական ավանդություններուն հանդեպ, մասամբ սիմվոլիկ բնություն ունին, կարելի չէ ժխտել։ Իրավ է, որ այս երիտասարդներեն շատերը հայ ընկերներով կը ժամանցնեն, իրենց հայկական ինքնությունը կը ջանան դրսևորել կարգ մը վերհիշողական սիմվոլներով, ինչպիսին են՝ ազգային սեղան սարքել, հայկական երաժշտությամբ պարել և մկրտության, ամուսնության և հուղարկավորության հանդեսներուն մասնակցել։ Սակայն ասոնք չեն միակ հետաքրքրության նշանները հայ նոր սերունդներուն մոտ։

Տեսնենք, թե ինչպես զարգացավ այս աշխուժությունը։

1965-ը եղեռնի 50-ամյակն էր։ Այս տարեթիվը եղավ տեսակ մը հաշվեկշռի տարին սփյուռքահայության համար։ Անցյալ կես դարի ընթացքին։

Ի՞նչ եղած են և ուր հասած էին։

Պատասխանը հուսահատելի եղավ մանավանդ երիտասարդության համար, որովհետև Հայկական հարցին լուծման բերումով այդ 50 երկար տարիներու ընթացքին ոչ միայն ոչինչ չէր կատարված, բայց հայ-սփյուռքը միաժամանակ և գրեթե բոլորովին ապաքաղաքականացած էր։

Բոլոր երկիրներու մեջ (ի բացառություն Թուրքիայի) հայերը այդ տարվա ապրիլ 24-ին հրապարակ իջան, պահանջելու համար իրենց ազգային իրավունքներ ու միաբերան կանչեցին թե խնդիր մը ունեին զոր չէր լուծված տակավին։

Իրենց հիասթափությունը վերածվեց սևեռումի՝ հայապահպանության բնության մասին։ Միևնույն ժամանակ լուրջ ուսումնասիրություններ կատարվեցան հայ-սփյուռքի զանազան ենթամասերու վրա։ Եվ ահա դիմադրություն մը առաջ եկավ ընդդեմ դասական քաղաքական կուսակցությանց և իրենց (ապաքաղաքականացնող) քաղաքականության ու անշարժության։

Այս պրոցեսը ուժ առավ նաև ժամանակի ընկերային ու քաղաքական երևույթներեն, ինչպիսին էին ֆրանսիական ուսանողական շարժումները 60-ական տարիներու վերջերին (1968 մայիսյան շարժումը), Պաղեստինյան շարժումը (1965 թ.), Քրդական ազգային ազատագրական շարժումը 70-ական թթ. և այլն։

Պատմական երևույթները իսկապես մեծ ազդեցություն ներգործեցին Սփյուռքահայ նոր սերունդներու վրա և իրենց մղեցին նոր ուղիներ որոնելու, իրենց ոտնակոխված իրավունքները վերստանալու համար։ Եվ 24-ը ապրիլի 1965 թ. սկիզբը եղավ հայկական պատմության նոր շրջանի մը, շրջան՝ քաղաքականացման։ Եվ ահա քաղաքական նոր հոսանքների պայքարի նոր ձևերով զինված ազատագրական կազմակերպություններ առաջացան հայ սփյուռքի իրականության մեջ։

Առաջին հերթին Արևելքի մեջ ծայր առնող այս երևույթը շուտով տարածվեց հայ սփյուռքի արևմտյան գաղութներում, գաղութներ, որոնք հայացման նոր թափ ստացան Մ. Արևելքի երկրներեն դեպի Արևմուտք շարժող հայ գաղթականության հոսանքով։

Հետազոտական, փաստագրական և տեղեկատվական նոր մարմիններ գոյացան և այս աշխուժությամբ հայր թե՛ ազգային և թե՛ միջազգային գետիններու վրա շոշափելի հաղթանակներ տարավ։ Իսկ Ղարաբաղյան շարժումը եկավ ամբողջացնելու հայ սփյուռքի և Հայաստանի հայության ինքնագիտակցության վերստացման գործընթացը։ Հայապահպանումը նոր և առավել զորավոր հիմքերու վրա նստեցավ։ Ապագա անկախ Հայաստանը կարող է այդ հիմքերը ամուր պահել, սփյուռքահայության համար էթնիկական ինքնության խարիսխ մը հանդիսանալով։